

## ԿԱՄՔՐ ԵՎ ԿԱՄԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դավիթ Օհանյան

«Նաստիկանություն կրթահամալիրի ասպիրանտ»

Քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման հիմնական միջոցներից է պայմանագիրը: Այն մասնավոր անձանց միջև հարաբերությունների կարգավորման յուրօրինակ միջոց է: Ցանկացած պայմանագրի շարժիչ ուժը կողմերի կամքն է: Սակայն դա հոգեբանական ներքին գործընթաց է, որը երրորդ անձանց հասանելի չէ: Որպեսզի այդ կամքը դառնա հասանելի, անհրաժեշտ է, որ այն արտահայտվի արտաքին նշաններում (բառեր, նամակներ, գործողություններ և այլն): Այլ խոսքով՝ պայմանագրի ստեղծման համար անհրաժեշտ են և՛ կամք, և՛ կամահայտնություն:

Պայմանագիր կնքելիս կամքը և կամահայտնությունը հիմնականում համապատասխանում են, սակայն երբեմն կարող է պատահել, երբ արտահայտված կամքը չհամապատասխանի ներքին, իրական կամքին, այսինքն՝ կողմի կամ կողմերի իրական մտադրությանը: Ուստի իրավունքի առաջ հարց է ծագում ինչին տալ նախապատվություն՝ արտահայտված կամքի՞ն, թե՞ իրական կամքին: Այս հարցի լուծումն առավել դյուրին է այն դեպքում, երբ կամքի և կամահայտնության միջև եղած անհամապատասխանությունը հայտնի է եղել հակառակ կողմին: Սակայն խնդիրը էականորեն բարդանում է, երբ այդ անհամապատասխանությունը հայտնի չէր կամ չէր կարող հայտնի լինել կոնտրագենտին, և վերջինս ուներ բոլոր հիմքերը ենթադրելու, որ կամահայտնությունը համապատասխանում է իրական կամքին, հետևաբար նաև հենվելու նման կամահայտնության վրա: Ուստի առաջանում է բարդ դիլեմա. մի կողմից՝ այն կամահայտնության վրա հենվելը, որը կողմն իրականում չէր ցանկանում, հակասում է պայմանագրի բնույթին և էությանը, իսկ մյուս կողմից՝ չի կարելի ոտնահարել կոնտրագենտի շահերը, քանզի վերջինս, ունենալով բոլոր հիմքերը՝ հենվելու կամահայտնության վրա, կարող է կրել լուրջ վնասներ:

Այս հարցը առկա է եղել նաև պատմական տարբեր ժամանակահատվածներում: Ինչպես նշում է Ի. Ա. Պոկրովսկին, հնագույն իրավունքն այս հարցի շուրջ աչքի էր ընկնում ֆորմալիզմով, որը բացառում էր ներքին իրական կամքի հնարավորությունը: Ֆորմալիզմի էությունն այն էր, որ անձի կողմից հրապարակայնորեն ասածը ստանում էր *օրենքին* հավասար ուժ և ենթական չէր փոփոխման կամ վերանայման<sup>1</sup>: Այս մոտեցումը եղել է հիմնաքարային և ընդունելի նաև միջնադարում<sup>2</sup>:

Սակայն, ֆորմալիզմը աստիճանաբար սկսեց զիջել իր դիրքերը: 19-րդ դարի առաջին կեսին այս դիլեմայի նկատմամբ ընդհանուր մոտեցումը փոխվեց դեպի կամքի տեսություն, քանզի գերակա էր հետևյալ միտքը. որտեղ չկա իրական կամք, չի կարող խոսք լինել իրավաբանական հետևանքների մասին: 19-րդ դարի երկրորդ

<sup>1</sup> Տե՛ս *Покровский И. А.* Основные проблемы гражданского права. – М., Статут. 1998, էջ՝ 245-250:

<sup>2</sup> Այս մոտեցման շուրջ ձևավորվեցին ասացվածքներ, մասնավորապես՝ գերմանական *Em man ein wort* (մի մարդ, մի խոսք) ասացվածքը նշանակում է ազնիվ մարդը հավատարիմ է իր խոսքին: Դրան համարժեք է ռուսական ասացվածքը. *Ինչը գրված է փետուրով, չես կտրի կպնով*:

կեսից, սակայն, այսպես կոչված մաքուր կամքի տեսությունը (*reine Willenstheorie*) ավելի հաճախ ենթարկվեց քննադատությունների: Առավել հիմնավոր և ընդունելի դարձավ այն մոտեցումը, որ չի կարելի ոտնահարել կոնտրադեմոնստրի շահերը և քաղաքացիական շրջանառության ընթացքը զոհաբերել հանուն անհատական շահի: Այս մոտեցման տրամաբանությամբ յուրաքանչյուրն իրավունք ուներ հենվելու ցանկացած կամահայտնության վրա, քանզի հակառակ կողմը միշտ պետք է պատասխանատու լիներ իր կամահայտնության համար<sup>1</sup>:

Եվ այս մոտեցումների ճնշմամբ կամքի տեսությանը հակադրվեց այսպես կոչված կամահայտնության տեսությունը (*Erklärungstheorie*) կամ, այլ կերպ ասած, վստահության տեսությունը (*Vertrauenstheorie*): Կամքի տեսությունը նախապատվություն է տալիս իրական կամքին, այն ցանկություններին և մտադրություններին, որոնք ուղղված են իրավաբանական որոշակի հետևանքներ առաջացնելուն: Իսկ կամահայտնության տեսությունը նախապատվություն է տալիս ոչ թե կողմերի ցանկությանը, այլ՝ թե հատկապես ինչ են նրանք սահմանել պայմանագրում: Հիմնական խնդիրն այն է, թե որին տալ նախապատվություն՝ կամքի<sup>2</sup>ն, թե՞ կամահայտնությանը<sup>2</sup>:

Քաղաքացիական իրավունքի դոկտրինում գոյություն ունեն մի քանի մոտեցումներ կամքի և կամահայտնության հարաբերակցության մասին: Կամքի տեսության կողմնակիցները գտնում են, որ գործարքի միջուկը կողմի ներքին կամքն է: Այդ իսկ պատճառով կամքի և կամահայտնության միջև անհամապատասխանության դեպքում, եթե կամքը տեսանելի է, և գործարքն ընդհանուր առմամբ կարելի է կնքված համարել, նախապատվություն պետք է տրվի կամքին և ոչ թե կամահայտնությանը<sup>3</sup>: Կամահայտնության տեսության կողմնակիցները, հակառակը, գտնում են, որ գործարքն առաջին հերթին գործողություն է, ուստի իրավաբանական հետևանքները պետք է վերաբերեն կամահայտնությանը, որի շնորհիվ ապահովվում է քաղաքացիական շրջանառության կայունությունը<sup>4</sup>:

Սակայն գիտնականների մեծ մասը գործարքի մեջ առանձնացնում է երկու կարևոր և հավասար տարրեր՝ սուբյեկտիվ (կամք) և օբյեկտիվ (կամահայտնություն): Դրանցից որևէ մեկի բացակայությունը հանգեցնում է գործարքի բացակայության: Այս տեսության կողմնակիցները որպես գործարքի պարտադիր պայման են դիտում կամքի և կամահայտնության միասնությունը<sup>5</sup>: Այս տեսության համաձայն՝ կամքը և կամահայտնությունը հարաբերակցվում են որպես պատճառ և հետևանք, այսինքն՝ մեկը չի կարող գոյություն ունենալ առանց մյուսի: Այս տեսությունն իր գործնական կիրառությունն է ստացել նաև ներպետական դատական պրակտիկայում: Մասնավորապես, գործերից մեկում Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. յուրաքանչյուր գործարք (պայմանագիր)

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս *Рабинович Н. В. Недействительность сделок и ее последствия, Ленинград, 1960. էջ 7, Шахматов В. П. Основные проблемы теории сделок по советскому гражданскому праву: Автореферат дис... канд. юрид. наук. М., 1951, էջ 8:*

<sup>4</sup> Տե՛ս *Новицкий И. Б. Сделки. Исковая давность, էջ 22; Медовщикова Е. О. Толкование гражданско-правового договора /Цивилистические записки: Межвузовский сборник науч. трудов. М., Статут, 2002. էջ 127:*

<sup>5</sup> Տե՛ս *Агарков М. М. Понятие сделки по советскому гражданскому праву / Советское государство и право, 1946, № 34. էջ 46; Красавчиков О. А. Юридические факты в советском гражданском праве. М., Госюриздат, 1958, էջ 50:*

նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: «Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց **ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է**: Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ազդեցությամբ<sup>1</sup>:

Կամքի և կամահայտնության միջև եղած այս հակասությունը լուծելու օրենսդրական մեխանիզմներից է նաև պայմանագրի մեկնաբանման ինստիտուտը, որի սկիզբը նախանշվում է դեռևս Ցիցերոնի՝ այսպես կոչված *causa Curiana* (Կուրիանայի գործը) աղմկահարույց միջադեպում: Խոսքը մի գործի մասին է, որտեղ մի կողմի փաստաբանն էր հայտնի իրավաբան, նախկին կոնսուլ և գերագույն քուրմ Քվինտոս Մուցիոս Սցևոլան, իսկ մյուս կողմին պաշտպանում էր հայտնի հռետոր Լուկիոս Լիկինիոս Կրասոսը: Գործի բնույթը հետևյալն էր. ինչ-որ մեկը կտակ է թողնում, որտեղ գրում է՝ *եթե ես երեխա ունենամ, և նա չհասնի չափահասության, ապա ես ցանկանում եմ, որ Կուրիանան լինի իմ ժառանգը*: Ստացվում է այնպես, որ երեխան չի ծնվում: Սցևոլան պնդում է, որ կտակի տառացի մեկնաբանմամբ Կուրիանան այս իրավիճակում ժառանգման իրավունք չունի՝ հիմնավորելով, որ հանրության համար վտանգավոր է մի կողմ թողնել գրվածը և զբաղվել կտակարարի ենթադրյալ կամքի հաստատմամբ: Կրասոսը, հակառակը, հենվում է կտակարարի կամքի և կտակի ընդհանուր իմաստի վրա՝ շեշտելով, որ արդարությունը պահանջում է՝ միտքը և կամքը պահպանվեն: Հին հռոմեական իրավաբանները առավել հակված էին երկրորդ մոտեցմանը<sup>2</sup>:

Մեր ժամանակներում նույնպես այս հարցը շարունակում է մնալ արդիական և թերի կարգավորված: Հատկապես բաց է մնում այն հարցը, թե արդյոք կարելի է մեկնաբանողի առջև դնել կամքի բացահայտման խնդիր: Որպեսզի պատասխանենք այս հարցին, պետք է անդրադառնալ գործարքի իրավաբանական հասկացությանը, որի մեջ ավանդաբար մտնում է չորս տարր՝ գործարքի կողմի կամ կողմերի գործունակությունը, կամքի ու կամահայտնության միասնությունը, բովանդակության օրինականությունը և գործարքի ձևի պահպանումը<sup>3</sup>: Քանի որ գործարքի մեջ առկա է կամքի և կամահայտնության միասնությունը, չի կարելի բացառել կամքը (կամ ինչպես դա անում է ներկայիս օրենսդիրը, դիտել այն որպես երկրորդական նպատակ), քանզի այն այս մեխանիզմի կարևոր բաղադրիչներից է:

Պետք է ընդգծել, որ ՀՀ քաղ. օր.-ի 447-րդ հոդվածը կամքի և կամահայտնության տեսությունների միավորման փորձ է՝ սահմանել մեկնաբանման եռաստիճան հիերարխիկի համակարգ: Ընդ որում, մեկնաբանման յուրաքանչյուր հաջորդ աստի-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2015 թվ-ի հուլիսի 17-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս *Новицкий И. Б., Перетерский И. С. Римское частное право*, 2012, էջ 317-318:

<sup>3</sup> Տե՛ս *Гримм Д. Д.* Лекции по догме римского права. – М.,: Зерцало, 2003. էջ 137, *Гражданское право: В 3-х т. Т. 1. Учебник / Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого.* – М.: Проспект, 2003. էջ 287:

Ճան թույլատրվում է միայն նախորդի կիրառությունից հետո, եթե անորոշությունը շարունակվում է մնալ չհաղթահարված: Այսպես, հողվածի առաջին մասում սահմանված է. «Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից (առաջին կանոն): Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով (երկրորդ կանոն)»:

Ըստ նույն հողվածի 2-րդ մասի՝ եթե այս երկու կանոնները հնարավորություն չեն տալիս որոշելու պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը (երրորդ կանոն): Օրենսդրական այս հիերարխիկ մոտեցումն արտացոլված է նաև ներպետական դատական պրակտիկայում<sup>1</sup>:

Ընդհանուր առմամբ օրենսդրի ձգտումը պարզ է. անհրաժեշտ է պահպանել քաղաքացիական շրջանառության կայունությունը և գտնել ոսկե միջին կամքի և կամահայտնության մեջ: Եվ առաջին հայացքից այդպիսի կայունություն կարող է ապահովել կամահայտնության տեսությունը: Արտահայտված կամքի անհստակության դեպքում միայն օրենսդիրը դիմում է կամքի տեսությանը: Կամքի և կամահայտնության տեսությունների նմանատիպ հարաբերակցությունը, սակայն, չի հանգեցնում առաջադրված խնդրի լուծման, այլ միայն ստեղծում է բազմաթիվ խնդիրներ:

Նախ՝ մեկնաբանումը՝ որպես ճանաչողական գործընթաց, բաղկացած է սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններից: Այդ իսկ պատճառով տառացի նշանակության անհստակությունը, որը ըստ այս մոտեցման, մեկնաբանման այլ աստիճանի անցնելու պայման է, կարող է առաջանալ տարբեր պատճառներով, այդ թվում՝ նաև մեկնաբանող անձի ընդունակություններով: Բացի այդ, գրականության մեջ առկա է այն տեսակետը, որ պայմանագրի կնքման փուլում գերակայում է սուբյեկտիվիզմը: Մասնավորապես, հայտնի ցիվիլիստ Գ. Ֆ. Շերշենևիչը նշում է, որ կոնտրադենտները որքան էլ մանրամասն և ուշադիր մշակեն պայմանագրի պայմանները, այնուամենայնիվ նրանք ի վիճակի չեն անդրադառնալու բոլոր հարցերին, որոնք կարող են ծագել հետագայում: Բացի այդ, քիչ պայմանագրեր են մշակվում իրավաբանների կողմից, ինչն իր հերթին առաջացնում է անհրաժեշտություն դրանց իմաստի բացահայտման, այսինքն՝ ինչ իրականում նկատի ունեին կողմերը<sup>2</sup>:

Երկրորդ, մեկնաբանումը միասնական գործընթաց է: Չի կարելի ի սկզբանե մեկնաբանման նպատակ դիտել պայմանագրի տառացի իմաստը և դրա հաստատման անհնարինության դեպքում նոր միայն կողմերի իրական ընդհանուր կամքը:

Երրորդ, օրենսդրական նման ձևակերպումը կարող է հանգեցնել պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի խեղաթյուրման: Մասնավորապես, խոսքը 447-րդ հողվածի 2-րդ մասի մասին է, որտեղ ասվում է, որ եթե սույն հողվածի առաջին մասի կանոնները հնարավորություն չեն տալիս որոշելու պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը:

Նախ՝ առաջին մասում խոսվում է բացառապես պայմանագրի առանձին պայմանների մեկնաբանման և ոչ թե նրա ամբողջ բովանդակության մասին, ուստի այդ

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2017 թվ-ի մայիսի 27-ի թիվ ՇՂ1/0303/02/10 որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս Шершеневич Г.Ф. Курс гражданского права. – Тула, 2001. էջ 410:

կանոնները ապրիորի ուղղված չեն պայմանագրի բովանդակության բացահայտմանը<sup>1</sup>: Բացի այդ, օրենսդիրը այս մոտեցմամբ արհեստականորեն հակասության մեջ է դնում պայմանագրի բովանդակությունը և կողմերի ընդհանուր կամքը՝ փորձելով դրանք դիտարկել որպես միմյանցից անջատ երևույթներ: Նման մոտեցումը, կարծում ենք, անընդունելի է, քանզի այդ հակասությունը էականորեն սահմանափակում է պայմանագրի բովանդակությունը տառացի (տեքստային) նշանակությամբ՝ բացառելով այն իրավունքները և պարտականությունները, որոնք կողմերն ի նկատի են ունեցել պայմանագիրը կնքելիս:

Չորրորդ, այս օրենսդրական մոտեցումը տարբեր ընկալումներ է առաջացնում նաև գիտական միջավայրում, ինչը, կարծում ենք, նույնպես վկայում է այդ կարգավորման աննպատակահարմարության մասին: Մասնավորապես, որոշ գիտնականներ գտնում են, որ գրավոր պայմանագրերը պետք է մեկնաբանվեն տառացի նշանակությամբ (այսինքն՝ կիրառման ենթակա է 447-րդ հոդվածի առաջին մասը), իսկ բանավոր պայմանագրերը մեկնաբանելիս պետք է պարզվի կողմերի ընդհանուր կամքը (համապատասխանաբար կիրառման ենթակա է 447-րդ հոդվածի երկրորդ մասը)<sup>2</sup>: Նման մոտեցման հետ դժվար է համաձայնվել, քանզի պայմանագրի էությունը և իմաստը կախված չեն այն կնքելու ձևից: Վերջինս պայմանագրի զուտ արտաքին դրսևորումն է, այսինքն՝ պայմանագրի կնքման ձևը նպատակ ունի պայմանագրի բովանդակությունը դարձնել հասանելի: Ուստի պայմանագրի մեկնաբանման ինստիտուտն ընդհանրապես, իսկ մեկնաբանման կանոնների կիրառման ընտրությունը մասնավորապես պայմանավորել և կախվածության մեջ դնել դրա արտաքին ձևից, կարծում ենք, ճիշտ չէ: Բացի այդ, այս մոտեցման կողմնակիցները չեն պատասխանում այն հարցին, թե այդ տրամաբանությամբ ինչպես պետք է մեկնաբանվեն կոնկլյուզենտ (ռեալ) ձևով կնքվող պայմանագրերը:

Հինգերորդ, եթե դատարանները սահմանափակվեն միայն պայմանագրի տառացի մեկնաբանմամբ, ինչն ընդհանուր առմամբ պահանջում է ներկայիս օրենսդիրը, ապա նրանք չեն կարող իրականացնել պայմանագրի իրավաբանական որակում, ավելին՝ նրանք ուղղակի պետք է ելնեն պայմանագրի անվանումից՝ չվերլուծելով կողմերի միջև փաստացի ձևավորված իրավահարաբերությունները: Սակայն ձևավորված դատական պրակտիկան խոսում է հակառակի մասին: Այսպես, իր որոշումներից մեկում ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով օրենսգրքի 447-րդ հոդվածի հիման վրա պայմանագրերի իրավաբանական դասակարգմանը, նշել է, որ պայմանագրերի իրավաբանական դասակարգման կամ պայմանագրերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված որոշակի պայմանագրերի տարրերի առկայության բացահայտումը մի քանի փուլերից բաղկացած գործընթաց է, որը պայմանագրի մեկնաբանության բաղկացուցիչ մաս է: Մասնավորապես, պայմանագրի իրավաբանական դասակարգման համար պետք է՝

- պարզվեն տվյալ պայմանագրի պայմանները (առարկան, գինը, ձևը, կողմերի իրավունքների և պարտականությունների շրջանակը),

<sup>1</sup> Պայմանագրի մեկնաբանման ինքնուրույն տեսակներին այստեղ չենք անդրադառնում, քանզի դա առանձին և համապարփակ ուսումնասիրության կարիք ունի:

<sup>2</sup> St`u **Медовщикова Е.А.** Толкование гражданско-правового договора / Цивилистические записки: Межвузовский сборник науч. трудов. – М., Статут, 2002. էջ 403, **Туранин В.Ю., Самострелова О.И.** Толкование гражданско-правовых договоров: некоторые проблемные аспекты // Юрист. М., 2007. № 2. էջ 24:

• դրանք համադրվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրերի վերաբերյալ ընդհանուր և կոնկրետ պայմանագրի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող հատուկ նորմերի հետ՝ պայմանագրի տեսակը որոշելու համար:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագրերի իրավաբանական դասակարգման նկատմամբ կիրառելի են ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ (պայմանագրի մեկնաբանում), այնպես էլ 8-րդ (քաղաքացիական իրավական նորմերի մեկնաբանում) հոդվածները<sup>1</sup>: Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումից պարզ է դառնում, որ վերջինս փորձել է ելք գտնել մեկնաբանման փակուղուց՝ հղում կատարելով քաղաքացիաիրավական նորմերի մեկնաբանմանը: Եվ դա պայմանավորված է նրանով, որ պայմանագրի մեկնաբանման դրույթները դատարանին չեն տալիս այս խնդրի լուծման համար անհրաժեշտ գործիքակազմ:

Վճռաբեկ դատարանի՝ վերը նշված որոշումը պայմանագրի պոզիտիվ և նեգատիվ դասակարգման յուրահատուկ օրինակ է: Տեսության մեջ ընդունված է նման դասակարգումը<sup>2</sup>, հետևաբար այս որոշումը գրականության մեջ արտահայտված դիրքորոշման գործնական դրսևորումն է: Կարծում ենք, որ պայմանագրերի իրավաբանական դասակարգման (որակման) մասին տեսության մեջ և պրակտիկայում ձևավորված մոտեցումները նույնպես խոսում են այն մասին, որ դատարաններն ի սկզբանե չեն կարող սահմանափակվել տառացի նշանակությամբ:

Տառացի նշանակության բացահայտումը մեկնաբանման առաջին փուլն է, որը ընդամենը ծանոթացում է մեկնաբանման օբյեկտի հետ: Մեկնաբանման պրոցեսում մեկնաբանողն իր առաջ խնդիր է դնում բացահայտելու, թե որն է այդ օբյեկտը: Ուստի անհրաժեշտ է պարզել, թե որն է պայմանագրի իրավաբանական հասկացությունը: ՀՀ քաղ. օր.-ի 436-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն: Այսինքն, օրենսդրի տրամաբանությամբ պայմանագիրը նույնացվում և հավասարեցվում է համաձայնության հետ, սակայն հարց է առաջանում՝ հատկապես ի՞նչի շուրջ համաձայնության: Վերը նշված հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ պայմանագրերի նկատմամբ կիրառվում են երկկողմ և բազմակողմ գործարքների մասին կանոնները: Այսինքն, այստեղ ևս բախվում ենք կամքի և կամահայտնության միջև եղած դարավոր հակամարտությանը: Եթե առաջնորդվենք այն բանով, որ պայմանագիրը կամքի համաձայնություն է, ապա մեկնաբանման նպատակն էլ կլինի այդ կամքի բացահայտումը, իսկ եթե կամահայտնության համաձայնություն է, ապա՝ վերջինիս բացահայտումը: Այս հարցը նույնպես տեսության մեջ միանշանակորեն չի ընկալվում: Մասնավորապես, Կ.Պ. Պոբեդոնոսցևի կարծիքով՝ պայմանագիրը մի քանի անձանց գիտակցված համաձայնությունն է, որի մեջ նրանք բոլորը համատեղ արտահայտում են իրենց կամքը՝ միմյանց միջև իրավահարաբերություններ ձևավորելու նպատակով<sup>3</sup>: Համանման դիրքորոշումներ են արտահայտել նաև Դ. Ի. Մեյերը, Կ. Ն. Աննենկովը<sup>4</sup>: Սրան հակառակ՝ Վ. Ի. Սինայսկին գտնում է, որ պայմանագիրը առանձնահատուկ կամահայտնություն է, որտեղ տեղի

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012 թվ-ի հունիսի 29-ի թիվ ԵՄԴ/0720/02/10 որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս **Черданцев А. Ф.** Толкование права и договора. – М., 2003, էջ 327:

<sup>3</sup> Տե՛ս **Победоносцев К. П.** Русское гражданское право: Ч. 2. – М.: Статут, 1997, էջ 156:

<sup>4</sup> Տե՛ս **Мейер Д.И.** Русское гражданское право. В 2 частях, Ч. 2, – М.: Статут, 1997, էջ 156, **Анненков К.Н.** Система русского гражданского права, СПб., 1912, էջ 8:

է ունենում ոչ թե երկու կամքի միավորում, այլ ձևավորվում է ինքնուրույն նոր կամք<sup>1</sup>:

Մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում հանգում ենք նրան, որ պատմական տարբեր ժամանակահատվածներում մեկ առաջնահերթություն է տրվել կամքի տեսությանը, մեկ կամահայտնության տեսությանը: Այս վեճը միշտ էլ առկա է եղել բոլոր երկրների օրենսդրության մեջ ու պրակտիկայում և եղել ու մնում է տեսաբանների ուշադրության կենտրոնում: Այս վեճից ձևավորվել է մի նոր, երրորդ՝ կամքի և կամահայտնության միասնության տեսություն, որն ինչ-որ չափով խնդրին լուծումներ է առաջարկում: Սակայն, ինչպես իրավագիտրեն նկատում է ականավոր ցիվիլիստ Ի. Ա. Պոկրովսկին, խնդիրն այստեղ ավելի խորքային է և քողարկված է հանրային ու մասնավոր շահերի հարաբերակցության մեջ<sup>2</sup>:

Ցանկացած իրավական պետության նպատակն է հասնել հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռման: Այս բոլոր տեսություններն ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր, և ամենևին էլ պարտադիր չէ ընտրություն կատարել դրանց միջև կամ նախապատվություն տալ որևէ մեկին, այլ պետք է ապահովել այդ շահերի ողջամիտ հավասարակշռումը: Մասնավորապես, անձը, նրա կամքն ու ցանկությունները էական են մասնավոր և հատկապես պայմանագրային հարաբերություններում, և դա հենց բխում է կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքներից: Սակայն, մյուս կողմից, պետությունը՝ որպես քաղաքացիական իրավունքի առանձնահատուկ սուբյեկտ, շահագրգռված է քաղաքացիական շրջանառության կայունությամբ. նա պարտավոր է ապահովել ինչպես անհատի, այնպես էլ հանրության շահերը:

Այս կոնցեպցիան պետք է դրվի նաև պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի հիմքում: Տեսության մեջ նման փորձեր եղել են: Մասնավորապես, Յու. Լ. Սենինան առաջարկել է պայմանագրի մեկնաբանման հետևյալ մեխանիզմը՝ պայմանագիրը մեկնաբանելիս դատարանը պարտավոր է ուշադրություն դարձնել ինչպես այնտեղ տեղ գտած բառերի և արտահայտությունների տառացի նշանակությանը, այնպես էլ բոլոր համապատասխան հանգամանքներին, այդ թվում՝ պայմանագրին նախորդող բանակցություններին և թղթակցությանը, կողմերի միջև ձևավորված պրակտիկային, գործարար շրջանառության սովորույթներին, կողմերի հետագա վարքագծին, որոնք հնարավորություն կտան պարզելու կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Այն դեպքերում, երբ պայմանագրի տառացի նշանակությունը հակասում է կողմերի իրական ընդհանուր կամքին, նախապատվություն պետք է տրվի կողմերի իրական կամքին, եթե դա չի հակասում պայմանագրի իրավական բնույթին, ինչպես նաև չի խախտում երրորդ անձանց իրավունքները և օրինական շահերը<sup>3</sup>:

Մեկ այլ դիրքորոշում է արտահայտել Ա. Կ. Բայրամկուլովը. վերջինս կարծում է, որ օրենսդրությամբ ամրագրված կանոններն ընդհանուր առմամբ աշխատող են, ուղղակի պետք է ապահովել դրանց միջև կայունություն, որը հնարավոր է ապահովել տառացի նշանակության օգտին կանխավարկած սահմանելով, ընդ որում այդ կանխավարկածը պետք է լինի հաղթահարելի: Այսինքն, պետք է առաջնորդվել այն

<sup>1</sup> Տե՛ս **Синайский В. И.** Русское гражданское право. – М.: Статут, 2002, էջ 309:

<sup>2</sup> Տե՛ս **Покровский И. А.** Основные проблемы гражданского права. – М.: Статут, 1998, էջ 245-250:

<sup>3</sup> Տե՛ս **Сенина Ю. Л.** Категория воли в гражданском праве России (в аспекте гражданско-правовой сделки) – Новосибирск., 2006, Дисс... канд. юрид. наук, էջ 154-155:

կանխավարկածով, որ կողմերի կամքը համապատասխանում է պայմանագրի տեքստին, սակայն այդ կանխավարկածը կարող է հաղթահարվել ցանկացած փաստարկով: Ստացվում է մի իրավիճակ, որ դատարանն ուսումնասիրում է պայմանագիրը և բացահայտում դրա տառացի նշանակությունը, բայց ոչ թե ինքն է որոշում կանգ առնել, այլ կաշկանդվում է կողմի դիրքորոշմամբ: Հետևաբար, այն կողմը, որը համաձայն չէ տառացի մեկնաբանմանը և գտնում է, որ այն չի համապատասխանում իրական կամքին, պետք է ներկայացնի համապատասխան փաստարկներ<sup>1</sup>:

Մեր կարծիքով, երկրորդ դիրքորոշումն առավել ընդունելի է: Նախ՝ այդ կանխավարկածով ապահովվում է մրցակցության սկզբունքը, քանզի պայմանագրի մեկնաբանումը ինքնանպատակ չէ. դա իրականացվում է այն դեպքում, երբ կողմերի միջև առկա է վեճ, ուստի տրամաբանական չէ այն հանգամանքը, թե ինչու պետք է դատարանը կանգ առնի, եթե կողմերի միջև վեճը շարունակվում է: Երկրորդ, այս կարգավորումը նվազագույնի է հասցնում դատարանի կողմից պայմանագրի խեղաթյուրումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածը թեև կոչվում է պայմանագրի մեկնաբանում, սակայն փաստացի միտված է պայմանագրի *տեքստի* մեկնաբանմանը: Մեր կողմից արված բոլոր վերլուծությունները և մտահանգումները ոչ թե ուղղված են պայմանագրի տառացի մեկնաբանման դեմ, այլ առաջարկում են հրաժարվել պարզ տառացիության քաղաքականությունից (լիտերալիզմ), որը որդեգրել է ներկայիս օրենսդիրը: Պայմանագրի տառացի մեկնաբանումը մեկնաբանման կարևորագույն կանոններից է, սակայն պետք չէ սահմանափակվել այդ կանոնով կամ առավել ևս գերադասել այլ կանոններից: Պետք է ձևավորել պայմանագրի մեկնաբանման այնպիսի համակարգ, որը, մի կողմից, հնարավորություն կտա մեկնաբանողին առավելագույնս բացահայտել կոնտրադեմտների միջև ձևավորված պայմանագրային հարաբերությունները, մյուս կողմից՝ հնարավորինս նվազագույնի կհասցնի միջամտությունը մասնավոր հարաբերություններին:

## ВОЛЯ И ВОЛЕИЗЪЯВЛЕНИЕ В КОНТЕКСТЕ ТОЛКОВАНИИ ДОГОВОРА

Давит Оганян

*Аспирант Образовательного комплекса полиции Республики Армения*

Данная статья посвящена выявлению сущности теории воли и волеизъявления и исследованию института толкования договора в контексте этих теорий. В частности, в статье анализируются генерация и историческое развитие этих двух теорий, их роль в определении договора, как юридической категории. В результате данного анализа обсуждается целесообразность действующей внутригосударственной системы толкования договора с точки зрения перечисленных теорий.

<sup>1</sup> Տե՛ս **Байрамкулов А. К.** Особенности толкования договора в российском гражданском праве. М., 2015. , Дисс... канд. юрид. наук, էջ 65-70:



## THE WILL AND THE EXPRESSION OF WILL IN THE CONTEXT OF INTERPRETATION OF CONTRACT

**Davit Ohanyan**

*Postgraduate student of the Educational  
Complex of the Police of the RA*

---

This article is devoted to the study of the essence of theories of will and expression of will and to the research of the institute of interpretation of contract in the context of these theories. In the research, particularly, the origin and the historic development of these two theories, their role for definition of contract as a legal category have been analyzed. As a result, the author discusses the expedience of domestic system of interpretation of contract from the point of view of mentioned theories.

**Բանալի բառեր** – կամքի տեսություն, կամահայտնության տեսություն, վստահության տեսություն, կամքի և կամահայտնության միասնության տեսություն, պայմանագրի մեկնաբանում, տարազի մեկնաբանում, համակարգային մեկնաբանում, տրամաբանական մեկնաբանում

**Ключевые слова** – теория воли, теория волеизъявления, теория доверия, теория единства воли и волеизъявления, толкование договора, буквальное толкование, систематическое толкование, логическое толкование

**Key words** – theory of will, theory of expression of will, theory of confidence, theory of unity of will and expression of will, interpretation of contract, literal interpretation, systematic interpretation, logical interpretation